

բերն իրենց սովորութիւն ըրած ըլլալովն, ազգին մէջ նշանաւոր համարում ու հանրական համակրանք մը ստացած են:

Ասիա օրաթերթ Թ. 30.

ՎԱՆ.

Անցեալ 1872 տարուան Փետրվարի մէջ կատարուած Վանայ քաղաքին ընդհանուր վիճակագրութենէն կը հասկցուի որ, Վանայ մէջ ամբողջ 8007 արու Հայ կայ բնակիչ, որոնցմէ 4410 ը քսան և հինգ տարեկանէն վար, իսկ 3597 ը 25 տարեկանէն վեր են:

Սոյն գումարին վրայ եթէ հաւանական հաշուով 7-8000 ալ կին յաւելցուի, այն ատեն Վանայ այսօրուան Հայ բնակչաց թիւը 16.000-ի կը հասնի:

Աւաղորութեան արժանի է աս կէտը, որ վերջիշեալ 8007-էն 1200 անձինք զանազան հետաւոր տեղեր պանդխտութեան մէջ կգտնուին, հետի իրենց ընտանիքէն՝ հետեւաբար զուրկ ամուսնական կենցաղավարութենէ:

Նոյն, Ապրիլ 12, Թ. 37.

ԴԱՐՁԵԱԼ ՅՈՒՆԱԿԱՆ ՁԵՂԾՈՒՄ.

Թէպէտ Յոյն լրագիրը կը պատմէ թէ Հայ երիտասարդ մը սիրահարուելով Յոյն աղջկան մը հետ, անցեալ Նիրակի Բերայի Հացոց եկեղեցին կը զիմէ ամուսնանալու արտօնութիւն խնդրելով:

Հայ քահանայն, վերջերս Հայ և Յոյն Պատրիարքարանաց մէջ հաստատուած դաշինքը նշկատելով՝ հաճութիւն չտար, աղջիկը Յունաց Պատրիարքարանին վերաբերած ըլլալուն համար:

Սակայն Հայ երիտասարդը իւր եկեղեցին թողլով, Յոյն քահանայի մը կը զիմէ, որն որ անոնց կարգապահութեան անսալու, դրամը կառնէ և պսակը կը կատարէ:

Այս դէպքին վրայ Թէպէտ կը յաւելու թէ սոյն քահանայն, որ արդէն ուրիշ յանցանքի մը համար րանադրուած է եկեղեցիէն, արժանի է որ աւելի խտտազոյն կերպիւ պատժուի:

Մենք ալ կը յաւելունք թէ՛ մինչև որ Յունաց Պատրիարքարանը յիշեալ ըմբոստ քահանայն չը պատժէ, սոյն մեղապարտ և դատապարտելի զեղծման ինքը պատասխանատու կը մնայ ողջամտութեան առաջը:

Օրաթերթ, Մայիս 10, Թ. 936.

Ա.Զ.Գ. ՀԻԻԱՆԳԱՆՈՅՆ

ԵՒ ԻԻՐ ՀՈԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ.

Եւէտի—գուրէն գուրս Ազգ. նշանաւոր յարկ մ' ունինք, Ատի Ազգ. Հիւանդանոցն է:

Դժբախդարար Հայերն այն ատեն կը յիշեն այդ յարկը, երբ հոն գնելիք հիւանդ մը, որը մը յիմար մը, անկեալ մ' ունենան:

Շատ տարիներէ ի վեր այդ յարկը ինչ ինչ վարչութեանց ու մատակարարութեանց ներքե անցնելէն յետոյ, վերջապէս այսօր այնպիսի վարչութեան մ' ու մատակարարութեան մը տակ կը գտնուի, որ իրաւամբ մեծ գոհունակութեան արժանի է:

Նոր Հոգաբարձութիւնը ուղեով Հիւանդանոցը «արմատական», սկզբունքով մը հիմնական բարեկարգութեանց վերածել, սխաւ անոր դրամական եկամուտներու աղբիւրներ ու միջոցներ ճարել ու հնարել:

Բազում տարիներէ ի վեր «պաթալ», եղած մոմարանը վերահաստատեց, որ այսօր իւր ծախքը գոցելէն զատ բաւական գումար մ' ալ շահ կը ձգէ, և ապագային մէջ աւելի պիտի շահի երբ աղջային եկեղեցիներն աղջային նախանձախնդրութեամբ ամենքն ալ շարունակեն Հիւանդանոցի մոմարանին շինածները գործածել:

Հիւանդանոցի առջև գտնուած ընդարձակ այգին՝ որ խիստ շատ տարիներէ ի վեր ամայի, անբեր և անմշակ թողուած էր, այն գիւնին մէկ մասին վրայ կանգառաստան (էնկինարիս) մը հաստատեց, որ տարիէ մը յետոյ 15000 էն աւելի տարեկան եկամուտ պիտի կրնայ բերել, և ինչպէս որ այս տարուան յաջող ընձիւղներէն ալ յայտնի է:

Հիւանդանոցի պատասպարելոյ բախլին համար առած է երկամուրույ թղթեր:

Հիւանդանոցի առջև գտնուած 400—450 կան-
դուն գետնին վրայ ալ հասարակաց պարտեզ մը
կը շինուի, և արդէն գործը բաւական ի զուի
կլաճ լինելուն առթիւ, ժողովուրդն հեղեղի պէս
ամեն Վիրակի կը դիմէ հոն, և Հիւանդանոցի
հաշտոյն բաւական գումար մը շահ ու նպաստ կը
թողուի Հոգաբարձութեան այս ազգագուտ ջանքե-
րը, որք մեծ կարևորութիւն ունին ըստ ինքեան,
նա մանաւանդ Որբոց վարժարանին նկատմամբ
ըրաժ նորանոր բարեկարգութիւններն ալ մէկտեղ
աւելով, զորս կուգեմք ուրիշ յօդուածով մը
յայտնել, Ազգային ընդհանուր համակրանացն
արժանի են:

Մասնաւորապէս շնորհակայեաց արժանի է
Հիւանդանոցի Հոգաբարձութեան Ատենայեան
Մեծ. Գէորգ Էֆէնտի Զարդարեան, որ իր ծանր
զբաղմանց մէջ անգամ ամեն օր մէկ ժամ կը
զօհէ հիւանդանոցի մատակարարութեան հաշիւ-
ներուն հսկելու:

Զարդարեան Էֆէնտի սոյն ազգասիրական և
անձնուէր ջանից մեր շնորհակալութիւնը կը
յայտնեմք և կը փափաքենք որ շարունակէ ու չը
կասի:

Աննպաստ լեզուներ թող խօսին, երբ գործքը
խօսքերուն հակառակը կ'հաստատէ ու կցուցնէ:
Աշխատաւորին քրտինքն առանց արդիւնքի ու
նշանակութեան չմտար այնպիսի ողջամիտ ազ-
գայնոց քով՝ որք ոչ թէ մարդն իր խօսքովը՝
այլ գործքովը միայն կը գատեն:

Աթա, Մայիս 10, Բ. 61.

ՎԱՐԺԱՊԵՏԱՆՈՅ.

Միմանամք որ՝ Ուսումնական խորհուրդը Ազգ.
վարժապետանոց մը շինուիլն որոշելուն հետ մէկ
տեղ, որոշած է նաև որ այդ վարժարանն Ղա-
լաթիոյ մէջ շինուի, իբրև կեդրոն տեղ մը, որոյ
շինութեանն համար պէտք եղած ստանն ալ հո-
գացած է. սակայն վարժարանը Ղալաթիոյ մէջ
շինուելու մասին տրուած որոշումը Ս. Պատրիարք
Հայրն, ով պիտէ ինչ պատճառաւ, յարմար չը-
գատելով հաճութիւն չէ տուած, որոյ համար յի-

շեալ որոշման գործադրութիւնն երեսի վրայ մը
նացած է:

Նոյն, Մայիս 12, Բ. 63

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԶԱՆԲԵՐ.

Բերկրութեամբ սրտի կը լսեմք թէ պատուար-
ժան Ուսումնական խորհուրդը քանի մը նիստէ ի
վեր մնայուն Ակադեմիայ մը հաստատելու մտա-
դիր է եղեր 30 դրագէտ անձերէ, սոյն պատեմիան
Ընդհանուր ժողովոյ նաև վաւերացնել պիտի տայ,
որոյ պաշտօնն պիտի ըլլայ հայերէն գրաբառ և
աշխարհաբառ լիզուն կոկել մաքրել և ընդհան-
րացնել ըրոր Հայաբնակ վիճակաց մէջ:

Նոյնպէս վարժարանաց դասադրքերու ընտրու-
թեան և միօրինակութիւն վերածելու պաշտօնը
պիտի ստանձնէ:

Ուսումնական խորհուրդը նաև ընդհանուր վար-
ժարանաց բարեկարգութեան համար հրահանգ մը
պատրաստած է՝ որ քիչ օրէն ամեն ազգային վար-
ժարաններու հաղորդելով՝ ինքն անձամբ այց ել-
նելով ճշտութեամբ նորա գործադրութեանը փոյթ
պիտի տանի. իսկ գաւառական Ուսումնական խոր-
հրդոց հետ՝ որ արդէն սերտ յարաբերութեան մէջ
և խիստ զահացուցիչ պատասխաններ առած է
(մասնաւորապէս քանի գաւառներ), աներկմիտ եմք
թէ՝ ի շնորհս դաւառական Ուսումն. խորհրդոց
յիշեալ հրահանգին գործադրութիւնը իրենց վար-
ժարանաց մեծապէս պիտի նպաստէ:

Գարձեալ Ուսումնական խորհուրդը 12 եկեղե-
ցական երգեցողութեան հմուտ անձերէ յանձնա-
խումբ մը կազմած է եկեղեցական երգեցողու-
թիւնը մի օրինակ եղանակի վերածելու համար և
կրօնական ժողովոյ հաւանութիւնն ալ առած է:

Գարձեալ ուրախութեամբ սրտի կը տեսնեմք
որ մայրաքաղաքէն գաւառները վկայեալ դասա-
տուներ ղրկել սկսած է ինչպէս Ռօստօթոյ, Զօր-
լու, Աֆիօն Գարահիսար ևն:

Զը մոռնամք յիշել որ՝ վարժապետական յանձ-
նաժողովը քիչ օրէն մայրաքաղաքիս վարժապե-
տաց տեղեկագիրը իւր տեսութեամբն հրատարակե-
լով մայրաքաղաքիս դասատուաց վիճակը պիտի